

ՍՊՈՐՏՈՒՄ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սրբեփանյան Ա. Գ. (ՀՖԿՍՊԻ, Երևան, Հայաստան)

annastep55@mail.ru

Ներկայացման ամս. 29.07.2020

Գրախոսման ամս. 12.08.2020

Տպագրության ընդունման ամս. 20.08.2020

Հողվածում փորձ է արվել հետազոտության միջոցով ուսումնասիրել սպորտում ուսանող մարզիկների և սպորտով չզբաղվող ուսանողների անհատական հատկությունները, բացահայտել սպորտում փոխադարձ ազդեցության հետևանքների և անհատական առանձնահատկությունների ու վարքագծի միջև կապը մարզիկների հոգեբանական պատրաստության գործընթացում: Նաև փորձ է արվել ուսումնասիրել այն անձանց, որոնց համար, հնարավոր է, ավելի հաճախ է օգտագործվում ագրեսիվ վարքի մոդելը: Հետազոտությունից պարզ դարձավ, որ սպորտով զբաղվելը և կոնկրետ մարզաձևի տեսակը՝ որոշակի ազդեցություն կարող են թողնել մարզիկների ագրեսիվության մակարդակի վրա: Հավանական է նաև հակառակ տարբերակը, երբ սպորտով զբաղվելը և կոնկրետ մարզաձևի տեսակը նպաստում են ագրեսիվության մակարդակի նվազեցմանը: «Ագրեսիվություն» հասկացության սահմանման տեսական մոտեցումների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հոգեբանության մեջ յուրաքանչյուր գիտական ուղղություն ունի յուրահատուկ սահմանում և տվյալ երևույթի ֆենոմենոլոգիայի ուսումնասիրման իր մոտեցումը:

Հանգուցային բառեր՝ ագրեսիա, վարք, անձ, հոգեկան վիճակ, սպորտ, մարզիկ, ֆիզիկական ակտիվություն, հոգեբանական գործոններ:

Մեր հասարակության առավել արդի սոցիալական խնդիրներից մեկն է հանդիսանում անձի ագրեսիվ վարքագծի աճը: Անձի զարգացման և վարքի մեջ տարբեր շեղումների աճը՝ հիմնականում պայմանավորված է հասարակության մեջ սոցիալական, տնտեսական և գաղափարական իրավիճակի լարվածությամբ, անկայունությամբ: Մարզիկների շրջանում ագրեսիայի ուսումնասիրությունը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ ուսումնասիրությունները վկայում են , որ ագրեսիայի ձևավորման պայմաններն ու աղբյուրը գտնվում են հենց երիտասարդության շրջանում: Հասարակության մեջ մշտապես եղել է որոշակի մտավախություն մարզիկների հավանական ագրեսիվության վերաբերյալ: Լրատվամիջոցները հաճախ են հանրությանը

ներկայացնում հայտնի մարզիկների կողմից հասարակական անկարգությունների դեպքերը: Հոգեբանների ուսումնասիրություններում այս խնդիրը մշտապես ուշադրության կենտրոնում է գտնվում: Ինչ վերաբերում է սպորտին, ապա եզրակացություններ են արվում, որ սպորտը մարզիկների մոտ ձևավորում է ագրեսիվ վարքագիծ, սպորտը պայման է հանդիսանում ագրեսիայի դրսևորման համար՝ ինչպես մարզիկների, այնպես էլ նրանց համար, ովքեր դիտում են սպորտային մենամարտեր:

Սպորտում նպատակին հասնելը կապված է մեծ ռիսկի, ժամանակի դեֆիցիտի հետ: Արդյունքի համար պայքարը միշտ հազեցած է զգացմունքներով և հանդիսանում է այնպիսի զգացմունքի պատճառ ինչպիսին ցատումն է:

Ըստ հույզերի տարբեր տեսությունների, միջանձնային ագրեսիվության մեջ նշանակալի դեր է խաղում հուզական հաղորդակցությունը և հակառակորդին մոտ գտնվելը, ինչպես նաև, տեսանելի կապը: Ագրեսիվության չափանիշներ են հանդիսանում «վարքի կամ գործողության ցանկացած ձև, որն ուղղված է մեկ ուրիշ կենդանի էակին վիրավորանք կամ վնաս պատճառելուն» [4], [6], [9, էջ 159]:

Սպորտում ագրեսիվ միտումների հետ կապված հարցերի վերաբերյալ մասնագետները չունեն միանշանակ պատասխաններ: Մրցակցային գործընթացների արդյունքում մարզիկների մոտ նվազում, թե՛ ավելանում է ագրեսիվ շեղվածությունը: Սպորտում գոյություն ունի այնպիսի իրավիճակ, որտեղ ագրեսիվության արտահայտման հավանականությունը մեծ է [7]:

Այն պայմանավորված է մարզիկների մոտ ֆրուստրացիոն վիճակով: Այսպիսի վիճակները լինում են պարտվելու, անարդար մրցավարների, վնասվածքների և այլ պատճառների արդյունքում: Այդպիսի վիճակներից է նաև հաղթանակին հասնելու ծայրահեղ ցանկությունը: Անընդունելի է տրամադրվել միայն հաղթանակի վրա: Այս դեպքում, մրցման անհաջող արդյունքի ժամանակ, ագրեսիվ հակազդումների հավանականությունը մեծ է [7]:

Մարզիկի վարքը ձևավորվում է հետադարձ կապի միջոցով՝ ամրապնդում և ներքին դրդապատճառ: Ամրապնդումը աջակցում է ուսուցման և դաստիարակության արդյունավետության բարձրացմանը, ձևավորում է վարքը անհրաժեշտ ուղղությամբ: Ամրապնդման հիմքում օգտագործում են խրախուսանքի և պատժի մեթոդները: Եթե սպորտային գործունեության արդյունքները դրական են, մարզիկները ջանում են կրկնել այդ նույն վարքը, որպեսզի ունենան նույն արդյունքը, իսկ եթե ելույթը անհաջող է, ապա վարքը, որի դեպքում եղել է պարտվողը՝ չի կրկնվում: Սակայն ամրապնդման բարդությունը կայանում է նրանում, որ ոչ բոլոր մարզիկները կարող են կրկնել ամրապնդում վարքը՝ սեփական անհատական առանձնահատկությունների պատճառով:

Բացի դրանից, մեծ նշանակություն ունեն վարքի վրա ազդող մոտեցումները [1], [8]:

Դրական մոտեցումը հիմնված է՝ մարզիկի հաջող վարքի համար, խրախուսանքի վրա, բացասական մոտեցումը ուղղված է ագրեսիվ հակումների վերացմանը՝ քննադատության և պատժի միջոցով: Ամրացման մեթոդների համակարգված օգտագործումը նվազեցնում է ագրեսիվ վարքի հավանականությունը: Հետադարձ կապի ապահովման համար, որն աջակցում է կայուն վարքի ամրապնդմանը, անհրաժեշտ է վարքի գրանցում: Օրակարգերը, որտեղ գրանցվում են սպորտային առաջընթացները, ուժեղացնում են ինքնակատարելագործման դրդապատճառը [5]:

Հոգեբանները, ուսումնասիրելով սոցիալական վարքը, եկել են այն եզրակացության, որ անհրաժեշտ է հանրաճանաչ դարձնել սպորտը, բայց դրա հետ մեկտեղ, մարզիկներին անհրաժեշտ է իրենք հետևեն իրենց սպորտային վարքին, որտեղ պետք է բացակայեն ագրեսիվ խթանիչները: Բացի դրանից, պետք է հաշվի առնել սոցիալական ֆասիլիտացիայի առկայությունը: Հետևելով մարզիկների էմոցիոնալ խաղին, որը իր մեջ ներառում է կոշտ վարքի տեսարաններ, հանդիսատեսը «լիցքավորվում են» բացասական հույզերով, որի հետևանքով նրանց մեջ ի հայտ է գալիս ագրեսիվ վարքը: Ընդհանրապես, սպորտի յուրահատկությունը պայմանավորում է մարզիկների կողմից մարզական վարքի իրականացումը՝ վերահսկելով իրենց գործողություններն ու հույզերը [9], [12]:

Սպորտը պայմաններ է ստեղծում հոգեկան հավասարակշռության պահպանման համար՝ ղեկավարվող հուզական արձագանքման միջոցով: Սպորտը կարող է ծառայել նաև որպես հուզական լիցքաթափման միջոց, բայց սա չի համարվում սպորտի գլխավոր նպատակը: Սպորտի առաջատար նպատակը ագրեսիվ հակումների վերահսկումն ու տիրապետումն է: Այսպիսով, անհրաժեշտ է վերահսկել հույզերը և ֆրուստրացիոն ռեակցիաները, կանխարգելել սթրեսները, տարբերել հաստատողականությունը և ագրեսիվությունը, մոդիֆիկացնել ագրեսիվ գործողությունները: Սպորտում հասկանալ և լուծել ագրեսիայի խնդիրները հնարավոր է գործողության գիտակցված կազմակերպման և կամային ջանքերի միջոցով [2]:

Սպորտային ագրեսիվությունը դրդապատճառային դեստրուկտիվ վարք է, որը հակասում է սպորտային օրենքներին, ունակ է վնաս պատճառել ֆիզիկական վնասվածքի կամ հոգեբանական դիսկոմֆորտի միջոցով: Սպորտի տարբեր ձևերին հատուկ է ագրեսիայի ի հայտ գալու տարբեր հնարավորությունները [7]:

Հետազոտողները ենթադրում են, որ մարդու ներքին ագրեսիվությունը կարող է դառնալ խթանիչ գործոն: Հենց սպորտային մրցաշարերի ժամանակ է տեղի ունենում առկա ագրեսիվության ելքը և փոխհատուցումը, որը վերջ ի վերջո, բերում է ռեկորդի կամ հաղթանակի [3], [4], [11]:

Գոյություն ունեն ագրեսիվ վարքի տարբեր մակարդակներ: Վաղ մանկության տարիքում, համապատասխան դաստիարակության արդյունքում մարդու մոտ կարող են ձևավորվել ագրեսիվ զգացմունքներ և վերաբերմունք կյանքի,

մարդկանց ու սպորտային իրավիճակների նկատմամբ: Սպորտային գործունեության որոշ իրավիճակներում ագրեսիվությունը կարող է կենտրոնանալ հակառակորդի, հրամանի կամ մարզչի վրա, որն էլ իր հերթին, կարող է հանգեցնել մրցակցային կանոնների շրջանակներում անմիջական ագրեսիվության: Եվ, վերջապես, ագրեսիվ հակումների կենտրոնացումը և սպորտային իրավիճակի բնույթը կարող են հանգեցնել ագրեսիվության այնպիսի ֆիզիկական արտահայտման, որը մրցման կանոններով արգելվում է [4, էջ 60-67], [5]:

Աղյուսակ 1. Սպորտում ագրեսիվության և ագրեսիվ վարքի արդահայտման ձևերը [11]Շ

Անմիջական ագրեսիվության արտահայտման բարձր հակումներ	Անուղղակի ճանապարհով ագրեսիվության արտահայտում	Ագրեսիվության մասին ընդհանուր պատկերացումներ, ագրեսիվության խրախուսում և պատիժ	Ագրեսիվության արտահայտման հնարավոր ձևեր	Ագրեսիվության ցածր հակումներ
Ֆրուստրացիա				
Արտահայտում է ֆիզիկական ագրեսիվություն սպորտում	Արտահայտում է ֆիզիկական ագրեսիվություն ոչ միայն սպորտում	Ֆիզիկական ագրեսիվության բռնկումներ՝ կանոնների և հասարակական նորմերի խախտումներով		

Կրետտին 1978թ.-ին առաջարկել է սպորտի տեսակների դասակարգումը՝ ըստ ագրեսիվության արտահայտման ձևի՝ կանոնների շրջանակներում.

անմիջական ագրեսիվության խրախուսում՝ բռնցքամարտ, ըմբշամարտ և այլն;

սահմանափակ ագրեսիվություն՝ բասկետբոլ, ջրային պոլո և այլն;

հակառակորդի հանդեպ ունեցած հարաբերության անուղղակի ագրեսիվություն՝ վոլեյբոլ, թենիս և այլն;

ագրեսիվություն, որն ուղղված է միայն օբյեկտի վրա՝ բիլիարդ, թեթև ատլետիկա, ծանր ատլետիկա:

Այսպիսով, ագրեսիվության արտահայտումը մի դեպքում կարող է լինել մոբիլիզացված գործոն՝ գործունեության նպատակին հասնելու համար հաղթահարելով սուբյեկտիվ և օբյեկտիվ խոչընդոտները, մյուսում՝ գրգռող գործոններին պատասխան իմպուլսիվ, բնազդային ինքնապաշտպանական ռեակցիա է [4, էջ 60-67], [10]:

Սպորտում նման գործողությունները հաճախ նկարագրվում են որպես ագրեսիվ գործողություններ, որոնք ենթադրում են հակառակորդի կամ մրցակից թիմի վճռական հարձակումը: Ագրեսիվ՝ այս իմաստով պարտադիր չէ անարդար լինել կամ վնասել հակառակորդին:

Նորմայից շեղումներ «ոչ սպորտային պահվածքի» իմաստով գոյություն ունեն, այնուամենայնիվ, երբ մարզիկը փորձում է ոչ միայն խանգարել մրցակցին իր գործողություններում, այլև ցանկանում է վնասել նրան որպես անձ («անձնական վնասվածք»):

Սպորտում գործողությունը կարելի է բնութագրել որպես ագրեսիվ վարքի դրսևորում, եթե սպորտային նորմերից շեղվելով, անձը մտադիր է իր գործողությանը այլ անձի վնաս պատճառել «անձնական վնասի» իմաստով, այդ վնասը կարող է լինել ֆիզիկական կամ հոգեբանական վնասվածքի տեսքով [9, էջ 159]:

Ագրեսիայի խնդրի հետազոտության շարքում խնդիրներ են հանդիսացել.

-որոշել կոնկրետ սպորտաձևի պարապմունքների ազդեցությունը, սպորտային որակավորման մակարդակը՝ մարզիկների վարքագծում ագրեսիայի դրսևորման վրա,

-առանձնացնել ագրեսիվ վարքի դրսևորման սեռային առանձնահատկությունները,

-վերլուծել, արդյոք սպորտային համակարգված պարապմունքները աջակցում են ագրեսիվ տենդենցների կրճատմանը կամ, ընդհակառակը, մեծացնում են ագրեսիվությունը:


Հետազոտություններում, որոնք կիրառել ենք ագրեսիվության գնահատման համար, որպես անհատի հոգեկան հատկությունների, և ագրեսիայի արտահայտում, որպես հոգեկան վիճակի դրսևորում, օգտագործվել են Ս. Սպիրբերգերի «Ագրեսիա-ագրեսիվություն սանդղակ» փորձարարական մեթոդը: Հետազոտություններում մասնակցել են 17-25 տարեկան 40 երիտասարդ՝ 20 մարզիկներ, 20 սպորտով չզբաղվող ուսանողներ:

Հետազոտության փուլերն են՝

- Փորձարկվողին առաջարկվել է երեք անգամ լրացնել հարցաթերթիկը՝ մեկ շաբաթ ընդմիջումով, դրա հետ մեկտեղ ներկայացնելով իրավիճակը.

- C1-հանգիստ, հարմարավետ պայմաններ

- C2-հոգեկան լարված իրավիճակ (մագիկների համար՝ խիստ վերահսկվող պարապմունք, ուսանողների համար՝ անհաջող քննություններ):




Նկար 1. 1-ին հատված՝ սպորտով չզբաղվող ուսանողների հետազոտության արդյունքներն՝ ըստ Սպիլբերգերի մեթոդիկայի, 2-րդ հատված՝ ուսանող մարզիկների հետազոտության արդյունքներն՝ ըստ Սպիլբերգերի մեթոդիկայի:

Նկար 1-ում ներկայացված են ուսանող մարզիկների (ֆուտբոլիստներ, թեթև աթլետներ) տվյալները, իսկ երկրորդ շարքում՝ սպորտով չզբաղվող ուսանողների (տղաներ և աղջիկներ) տվյալները:

Հանգիստ և հարմարավետ պայմաններում՝ սպորտով չզբաղվող ուսանողների մոտ (տղաների մոտ համեմատաբար ավելի բարձր է, իսկ կանանց մոտ՝ ոչ) նկատվում է ագրեսիայի ավելի բարձր մակարդակ, ուսանողներն ավելի ագրեսիվ են:

Հոգեկան լարված իրավիճակում (մազիկների համար՝ խիստ վերահսկվող պարապմունք) ագրեսիայի մակարդակը զգալի բարձր է սպորտով չզբաղվող ուսանողների մոտ (ուսանողների համար քննական իրավիճակն է, երբ ուսանողը չի համաձայնվում դասախոսի դրած գնահատականի հետ և փորձում է այն վիճարկել): Քննական իրավիճակների միջոցով՝ հակասությունների պայմաններում, մենք փորձեցինք մոդելավորել գործունեության իրավիճակը: Գործունեության իրավիճակներում ուսանողները, երբ կա նպատակ, արձագանքում են նույնպիսի ինտենսիվությամբ, ինչպես կարձագանքեին հիասթափությունների դեպքում (չհաղթահարելով նյարդայնացնող խթանը):

Իհարկե, այս տվյալները բավարար չեն ստացված արդյունքների ընդհանրացման համար, բայց բերված փաստերը վկայում են հույզերի կամային կարգավորիչների ավելի զարգացած մեխանիզմների և ինչպես հետևում է՝ մարզիկների կառուցողական ագրեսիա մասին: Հետազոտության տվյալների հակադրությունը, որն անցկացվել է Բասսի-Դարկի մեթոդիկայով, նույնպես ցույց են տալիս մարզիկների և ուսանողների խմբերի միջև տարբերությունները:



Նկար 2. 1-ին հատված՝ Սպորտով չզբաղվող 20 ուսանողների հետազոտության արդյունքներն՝ ըստ Բասսի-Դարկի մեթոդիկայի, 2-րդ հատված՝ 20 ուսանող մարզիկների հետազոտության արդյունքներն՝ ըստ Բասսի-Դարկի մեթոդիկայի:

Մեր կողմից իրականացվող հետազոտությունից պարզ դարձավ, որ աղքիկների մոտ ֆիզիկական և վերբալ ագրեսիան ավելի քիչ է արտահայտված, անուղղակի ագրեսիան մի փոքր ավելի բարձր արտահայտվածություն ունի:

Սպորտով չզբաղվող ուսանողների մոտ անուղղակի ագրեսիան ավելի բարձր արտահայտվածություն ունի, հատկապես աղքիկների մոտ: Ուսանողներն իրենց ագրեսիվության ցուցանիշով գերազանցում են մարզիկներին: Անուղղակի ագրեսիան այդ թվում նաև գրգռվածությունը ի հայտ են գալիս չարության, դյուրագրգռության, կոպտության, բռնկվողականության իրավիճակներում, այսինքն՝ հույզերը կառավարելու անկարողության մեջ: Եվս մեկ անգամ

հիասթափության և նպատակաուղղված գործունեության իրավիճակներում ագրեսիայի կամայական և ոչ-կամայական դրսևորումների մասին.

Ուսանող մարզիկներն ավելի շատ են օժտված իրենց հույզերը կառավարելու հմտություններով: Ագրեսիվության դրսևորումներում ստացված տարբերությունները (ըստ Բասի-Դարկիի մեթոդիկայի) հնարավոր է դարձնում բացատրել անհատական հատկությունների ինքնագնահատման տվյալները:

Ըստ անհատական հատկությունների ինքնագնահատման միջինացված տվյալների, համընկնումը տեղ ունի միայն ըստ մեկ ցուցանիշի՝ վստահություն իր հանդեպ: Մնացած դեպքերում սպորտով չզբաղվող ուսանողներն իրենց անհատական որակների գնահատման մեջ՝ նշանակալիորեն ետ են մնում ուսանող մարզիկներից: Ընդհանրապես պետք է նկատել, որ եթե մարզիկների մոտ, երբեմն, ինքնագնահատականը գտնվում է աղեկվատության վերին սահմանին, ապա ուսանողների մոտ ինքնագնահատականի շարքը մոտ է ցածր սահմանին: Կարելի է ասել, որ մարզիկները հակված են գերագնահատել իրենց հատկությունները, իսկ ուսանողները՝ թերագնահատել:

Հետազոտության իրականացումը թույլ է տալիս հերքել այն միտքը, որ սպորտը «ագրեսիայի դպրոց» է: Այո, սպորտը, և սպորտային գործունեության առանձնահատկությունները հաղթանակին հասնելու համար ձևավորում են հարմար տարբերակներ, որոնք էլ կարող են հանգեցնել ագրեսիվ վարքի : Ապակառուցողական ձևերն էլ, մեծ մասամբ, ունեն իրենց դրսևորումներն այն իրավիճակներում, երբ չեն հասնում նպատակին (մրցման ժամանակ՝ պարտություն, կամ նպատակին հասնելու հնարավորության բացակայություն՝ հիասթափության իրավիճակ) և առավել ցայտուն են այն մարդկանց մոտ, ովքեր դա չեն գիտակցել իրենց կյանքի կենսական ոլորտներում :

Չնայած նրան, որ հոգեբանության մեջ ագրեսիան հասկացվում է որպես վարքի դեզադապտացիոն ձևի դրսևորում, ագրեսիան սպորտում՝ մրցակցային կանոնների սահմաններում, ազդում է սպորտային գործունեության արդյունավետության վրա, հատկապես սպորտի այն տեսակների համար, որտեղ բարձր է ֆիզիկական -ագրեսիան, որտեղ բռնի ռազմավարությունները համարվում են սպորտային մրցման ժամանակ անբաժան տարրեր (օրինակ, մրցակցային կանոնների ձևերը):

Դրա համար սպորտում ավելի հաճախ դիտարկվում է ագրեսիայի երկու տեսակ.

ռեակտիվ կամ թշնամական,

գործիքային:

Գործիքային ագրեսիան, որն իր տեղն ունի ոչ ագրեսիվ նպատակների իրականացման ժամանակ, չի հանդիսանում հիասթափության ռեակցիաներ և իր մեջ չի ներառում չարություն: Թշնամական կամ ռեակտիվ ագրեսիան ուղղված է ինչ-որ մեկին ֆիզիկական կամ հոգեբանական վնասվածք պատճառելուն: Այն մարզաձևերում, որտեղ կա հակառակորդի հետ ֆիզիկական

շփում, դա նշանակում է, որ այդտեղ առկա է հետերոագրեսիա (արտաքին ագրեսիա), տեղի է ունենում նաև ագրեսիայի գործիքային և թշնամական տեսակների համադրություն: Այն մարզաձևերում, որտեղ մրցման շրջանակներում բացակայում է հակառակորդի հետ ֆիզիկական շփումը, այնտեղ ագրեսիան ստանում է աուտոագրեսիա ձևը:

Ագրեսիայի արտահայտման վրա էական ազդեցություն ունի ինքնագնահատականը, ինչպես ուսանող մարզիկների մոտ, այնպես էլ սպորտը չբաղվող ուսանողների: Որքան բարձր է ինքնագնահատականը, այնքան ուժեղ են արտահայտված ագրեսիայի ակտիվ ձևերը (ֆիզիկական և վերբալ), և ավելի թույլ են արտահայտված ագրեսիայի փակ ձևերը (անուղղակի ագրեսիա, բացասականություն, կասկածամտություն, դժգոհության և վրդովմունքի զգացում): Իր հանդեպ վստահությունն ավելի նշանակալի է դառնում ագրեսիայի արտահայտման իրավիճակների մեջ:

Կարելի է ասել, որ անինքնավստահ անձը՝ ագրեսիայի իմպուլսիվ ձև է դրսևորում՝ որպես պաշտպանություն և անձնական պատասխանատվության իրավիճակներում, անվճռականության փոխհատուցում: Անձնական պատասխանատվության բացակայության դեպքում, վարքի ագրեսիվ ձևը հնարավորություն է տալիս իրեն զգալ ուժեղ, ինքնավստահ, վճռական:

Հետազոտության արդյունքները հիմք չեն տալիս խոսել մարզիկների բարձր ագրեսիվության մասին, ավելին՝ ագրեսիվության ցուցանիշների զգալի տարբերությունները վկայում են, որ սպորտով չբաղվող ուսանողների մոտ ագրեսիայի ավելի արտահայտված դրսևորումների մասին: Օրինակ՝ անուղղակի ագրեսիան բարձր է սպորտով չբաղվող ուսանողների մոտ, գրգռվածության ցուցանիշով ևս ուսանողները գերազանցում են մարզիկներին:

Սպորտային խմբերի (աղջիկներ և տղաներ) վերլուծությունը ցույց տվեց, որ ագրեսիայի դրսևորումների վրա էական ազդեցություն ունի մարզիկի սեռի գործոնը: Սպորտի այն ձևերը, որոնք արթնացնում են ագրեսիա, ավելի շատ անդրադառնում են կանանց վարքի վրա, նրանց մոտ ձևավորելով ագրեսիվ վարքի կոպիտ գծեր:

Տղաների համար ագրեսիայի դրսևորումներում առկա է բավարարվածություն, իր հանդեպ՝ վստահություն, երբ հասնում են արդյունքների: Ագրեսիայի դրսևորումների մեջ՝ կանանց համար նշանակալի է արդյունքներին հասնելու բավարարվածությունը, իր հանդեպ՝ վստահությունը և նշանավոր մարդկանց մոտ հեղինակությունը:

Գրականություն

1. **Ավանեսյան Հ. Մ.** Փորձարարական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ Եր. Էդիթ Պրինտ, 2010թ., էջ 288:
2. **Ստեփանյան Ա. Գ.,** Հոգեկարգավորման հիմնախնդիրները սպորտում: Ուսումնական ձեռնարկ, Եր., 2012., էջ 104:

3. **Ստեփանյան Լ. Ս.**, Ազդեցիկ վարքի հոգեբանություն: Մեթոդական ուղեցույց 2013թ., ԵՊՀ, էջ 80:
4. **Басс А.**, Психология агрессии // Вопросы психологии, 1967г., N1,с. 60-67, с. 27-28
5. **Бэрон З. Р. Ричардсон Д.** Агрессия. - С-Пб - "Питер" – 2000, 352 с.
6. **Дорфман А. Я.** От мета индивидуальности к метаиндивидуальному миру. Психологический журнал 1995г., N3. с. 25-38
7. **Лоренц К.** Для чего нужна агрессия. М. - 1997., 206 с.
8. **Попов А.Л.** Психология спорта. М. 1999 – 289 с.
9. The Lancet, volume 366, special issue, s31-s32, december 01, 2005, Essay: aggression in sport (prof Daniel I Wann, Phd)
[https://www.thelancet.com/journals/lancet/article/PIIS0140-6736\(05\)67837-3/fulltext](https://www.thelancet.com/journals/lancet/article/PIIS0140-6736(05)67837-3/fulltext) (այց՝ 02.06.2020)
10. Aggression in Sport
<http://psychology.iresearchnet.com/sports-psychology/moral-development/aggression-in-sport/> (այց՝ 02.06.2020)
11. Aggression. A-level Revision Notes AQA(A) By Bruce Johnson, updated 2020,
<https://www.simplypsychology.org/a-level-aggression.html> (այց՝ 02.06.2020):

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПСИХОЛОГИЧЕСКИХ ФАКТОРОВ ПРОЯВЛЕНИЯ АГРЕССИВНОСТИ В СПОРТЕ

Степанян А. Г., (ГИФКСА, Армения, Ереван)

В статье рассматриваются индивидуальные особенности студентов-спортсменов и студентов не занимающихся спортом, связь между этими особенностями и поведением, и их возможным взаимовлиянием. Также исследовалась та личность, для которой может наиболее часто применяться модель агрессивного поведения. По результатам проделанной работы, стало очевидно, что занятия спортом и конкретный вид спорта может способствовать понижению уровня агрессии. Определение агрессивности в теоретических подходах дает возможность сделать заключение о том, что в психологии каждый научный подход имеет свою специфическую оценку определения и свой специфический подход исследования.

Ключевые слова: *агрессия, поведение, психическое состояние, спорт, спортсмен, физическая активность, психологические факторы.*

COMPARATIVE ANALYSIS OF PSYCHOLOGICAL FACTORS OF THE MANIFESTATION OF AGGRESSION IN SPORT

Stepanyan A. G. (HFKSPI, Yerevan, Armenia)

The article attempts to study the individual characteristics of sports students and non-sports students through research, identify the effects and interactions of interactions in sports and the relationship between behavior in the process of psychological training of athletes.

An attempt has also been made to study those individuals for whom the aggressive behavior model may be used more often.

Research has shown that doing sport and specific types of sport may have some effects on the aggression of athletes. But it is possible to have the opposite version too. It means that doing sport and specific types of sport may help reduce the level of aggression.

Analysis of theoretical approaches to defining the concept of aggression allows to conclude that every scientific direction in psychology has a unique definition and of the given event his approach to the study of phenomenology.

Key words: *aggression, behavior, mental state, sport, athlete, physical activity, psychological factors.*